Պարույր Սևակ

Շատ բան է պետք արդյոք

Շա՞տ բան է պետք արդյոք երջանկության համար:
Լեռան գլխին իջած կապույտ երկնակամար,
Ծաղկած ափին փարվող մի լեռնային ալիք,
Տաք հողի մեջ նստած մի փոշոտված բալիկ,
Հիշողություն մի տաք,
Տեղին արված կատակ.
Երեկ դեռ անծանոթ աղջկա հետ
Առանց հոգնածության շրջել ամբողջ գիշեր,
Ինքնամոռա՜ց այնպես, և - այնուհետ
Տոնի նման այդ օրն ամբողջ կյանքում հիշել.
Ձերոնց կողմից դրսում շահված մի մրցություն,
Քո քաղաքում հառնող մի հոյակապ նոր տուն,
Ուր ձմռանը վառվող վառարանի հանդեպ
Տղաղ պիտի կարդա հափշտակիչ մի վեպ,
Նա՛, որ խաղով այնքան երջանիկ է հիմա...
Շա՞տ բան է պետք արդյոք երջանկության համար:

25.IX.1953թ.
Մոսկվա